ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի N 1180-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 26.01.2024 14:53:04	Նախագծի հավելվածով սահմանված դրույթները հիմնված են բժշկասոցիալական փորձաքննության նախկինում գործած համակարգի վրա և հաշվի չեն առնում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի «հաշմանդամություն» հասկացությունը, որն ամրագրում է միջավայրային արգելքների հետ փոխազդեցության պարտադիր բաղադրիչը: Ուստի՝ հավելվածը ենթակա է վերանայման հաշմանդամության մարդու իրավունքների մոտեցումներին և օրենքի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:	Առաջարկն ընդունվել է:	
2	«Հաշմանդամություն ունեցող անձանց	Նախագծով առաջարկվում է որոշակի խմբի անձանց դեպքում իրականացնել	Առաջարկն ընդունվել է, «բժշկասոցիալական» բառը	

	իրավունքների օրակարգ» ՀԿ 26.01.2024 14:53:04	բժշկասոցիալական փորձաքննություն: Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված չէ «բժշկասոցիալական փորձաքննություն» հասկացությունը, որը նախկինում սահմանված է եղել «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով:	հանվել է:	
3	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 26.01.2024 14:53:04	Նախագիծը հակասում է «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2023 թվականի սեպտեմբերի 13-ի ՀՕ-276-Ն օրենքի 1-ին հոդվածին: Ըստ էության, նախագծի հավելվածով սահմանված են ոչ թե միջազգային պայմանագրերի շրջանակներում հաշմանդամության գնահատման առանձնահատկությունները, ինչպես պահանջվում է օրենքով, այլ սահմանված է բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգ:	Առաջարկն ընդունվել է:	